ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ԹԻՎ 704-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____» _____ 2021 թվականի N ____ -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ԹԻՎ 704-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողական ծառայությունը վերակազմավորել հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող՝ Վերահսկողական վարչության.

2) դադարեցնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող՝ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գործունեությունը:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 704-Լ որոշմամբ հաստատված հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

- 6-րդ կետի «վերահսկողական ծառայությունը» բառերը փոխարինել

«գրասենյակը» բառով,

- 10-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«8) Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Քրեակատարողական ծառայության, Պրոբացիայի ծառայության, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառույթ իրականացնող մարմինների, նոտարների և նոտարական պալատի, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, օրենքով նախատեսված կազմակերպությունների գործունեության օրինականության ապահովումը, ինչպես նաև վերջիններիս նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացման ապահովումը.»,

- 11-րդ կետում՝

ա. 8-րդ ենթակետից հանել «և դատավարական» բառերը,

բ. 26-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«26) օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում դատավորների, նոտարների, սնանկության կառավարիչների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը և դրա իրականացումը.»,

գ. լրացնել 27-րդ և 28-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝

«27) Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Քրեակատարողական ծառայության, Պրոբացիայի ծառայության, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության կողմից օրենքների և այլ իրավական ակտերի պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

28) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը։»,

- 16-րդ կետից հանել «վերահսկողական ծառայության ղեկավարը,» բառերը,
- 18-րդ կետի 19-րդ ենթակետից հանել «վերահսկողական ծառայության,» բառերը,
- 29-րդ կետում՝

ա. 6-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6) ապահովում է պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը տարին առնվազն մեկ անգամ, իսկ դրանցում կատարված փոփոխությունների դեպքում՝ 10-օրյա ժամկետում.»,

բ. լրացնել 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝

«7) ապահովում է նախարարության ինտերնետային էջի տեղեկատվական սպասարկման աշխատանքների իրականացումը.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է հայտ ներկայացրած լրագրողների հավատարմագրման աշխատանքների իրականացումը.

9) կազմակերպում է նախարարի, նախարարի ղեկավարած պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցերի և նրանց մասնակցությամբ նախարարությունում անցկացվող միջազգային բնույթի պաշտոնական միջոցառումների լուսաբանման աշխատանքները.

10) իրականացնում է նախարարի և նախարարի տեղակալների մոտ քաղաքացիների ընդունելության կազմակերպման աշխատանքները.

11) կատարում է նախարարի կողմից տրված այլ հանձնարարականներ։»,

- 32-րդ կետը լրացնել նոր 8-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«8) վերահսկողական վարչությունը։»,

- ուժը կորցրած ճանաչել 33-րդ կետի 5-րդ ենթակետը,
- 6-րդ գլխի վերնագրից հանել «ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ» բառերը,
- ուժը կորցրած ճանաչել 35-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ Նիկոլ Փաշինյան